

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՆՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՂԵՍ  
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԱՍԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

Բ

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2011

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԵԱՆ  
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՒՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ  
ՇՐՋԱՆԻ ՌԻՂՎՓԱՐ ԴԱԲՆՈՒԹԵԱՆ 1700 - ԱՄԵԱՅ ՊԱՏՈՒՐ

Ա. 1. Աներկբայելի ճշմարտութիւն է, որ մարդկային նոր քաղաքակրթութեան արեւածագը քրիստոնէութիւնն էր, որը եղել է մնում է մարդու եւ ազգերի ազատութեան, առաջընթացի ու եղբայրութեան, ժողովրդավարութեան ու ընկերային արդարութեան առանցքը, յենարանն ու բարձրակետը: Քրիստոնէութեան մուտքից յետոյ ասպարէզ իջած բոլոր ժամանակների բարենորոգիչները, լուսաւորիչները, յեղափոխականները եւ սահմանադրութիւնների ու օրէնսգրքերի հեղինակները այս կամ այն չափով հիմնուել են քրիստոնէական բարոյականութեան սկզբունքների վրայ: Սակայն այդ ազատութիւնը, ժողովրդավարութիւնն ու արդարութիւնը առաւելագոյնս պահպանուեցին եւ գործի վերածուեցին միայն Յիսուս Քրիստոսի առաքելների գլխաւորութեամբ գործող քրիստոնէական համայնքներում (առաքելական շրջան, Ա դ.) եւ Հայաստանում՝ ս. Գրիգորի ու ս. Տրդատ Մեծի օրօք: Առաքելական շրջանի քրիստոնէական համայնքներում եկեղեցական գործերը կառավարում էին նաեւ աշխարհականների մասնակցութեամբ գումարուած ժողովները: Ս. Գրիգորը նոյն սկզբունքը տարածեց ոչ միայն եկեղեցական կազմակերպութեան, այլ պետութեան բոլոր բնակիչների վրայ: Այդպիսով ս. Գրիգորը Տրդատ Մեծի օգնութեամբ առաքելական շրջանի քրիստոնէական համայնքների բարոյականութեան ու ժողովրդավարական սկզբունքները իրագործեց մի ամբողջ պետութեան մէջ՝ Հայաստանն ըստ էութեան վերածելով աշխարհի ամենալուսաւորեալ ու առաջադէմ երկիրը: Այսպիսով՝ Հայաստանը ս. Գրիգոր Լուսաւորչի ու ս. Տրդատ Մեծի ժամանակներում առաջին ու միակ երկիրը եղաւ, ուր իշխանութիւնը պետականօրէն գործում էր առաքելական շրջանի քրիստոնէական համայնքների սկզբունքներով: Ո՛չ դրանից առաջ, ո՛չ էլ յետոյ ոչ մի երկրում աշխարհիկ եւ հոգեւոր իշխանութիւնները ժողովրդի հետ միասին քրիստոնէութեան բարոյականութեան ու համակեցութեան սկզբունքներով այդպիսի համերաշխութեամբ, միաձուլ ու համատեղ չեն առաջնորդուել, ինչպէս դա եղաւ Հայաստանում՝ ս. Գրիգորի ու ս. Տրդատ թագաւորի գուգիշխանութեան ժամանակներում: Այս պատճառով է Ազաթանգեղոսը գրում. «Յայնմ ժամանակի երանելի ցանկալի եւ անպայման սքանչելի լինէր երկիրն Հայոց»<sup>1</sup>: Ս. Գրիգորի յաջորդները, մասնաւորապէս ս. Ներսէս Մեծը, շարունակեցին այս գիծը: Պատ-

<sup>1</sup> Ազաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1983, էջ 477:

միչը գրում է. «Եւ ինքն (ս. Ներսէսը: Ռ. Հ.) երթեալ հասանէր ի կողմանս Տարօն գաւառին, եւ ժողովէր առ ինքն զանազան եպիսկոպոսունս Հայոց աշխարհին: Ժողովեցան ի գիւղն Աշտիշատ, ուր զառաջինն զեկեղեցին էր շինեալ, զի նա էր մայր եկեղեցեացն եւ ի տեղի լեալ նախնեացն ժողովոց սինհոդոսին: Ի ժողով հաւանութիւնս եկեալ ամենեցուն, եւ խորհուրդ բարեաց ի մէջ արկանէին, կատարել անդ զաշխարհական կարգս եկեղեցւոյն եւ ժողովն հաւատոցն հաւասարութեան: Յայնմ ժամանակի կարգեցին կազմեցին կանոնեցին յօրինեցին, եւ արարին զամենայն համաշխարհի, բայց միայն յամուսնութեան օրինացն»: Ձայս միայն զառաքելակարգ կանոնսն ի վերայ ամենեցուն կացուցանէր սուրբ զեպիսկոպոսապետն Ներսէս: Ամենեցուն խրատատու եւ առաջնորդ յորդորիչ եւ նախանձաւոր լինէր զործոց բարեաց... առ հասարակ զնոյն օրինակ առնել հրամայէր յամենայն աշխարհս եւ ի գաւառս եւ ի կողմանս կողմանս, ի կոյսս կոյսս, ի խորշս խորշս սահմանացն Հայոց» (Նա գնաց հասաւ Տարօն գաւառի կողմերը եւ իր մօտ ժողովեց Հայոց աշխարհի բոլոր եպիսկոպոսներին: Ժողովուեցին Աշտիշատ գիւղում, որտեղ առաջին անգամ եկեղեցի էր շինուած, որովհետեւ նա էր մայր եկեղեցին եւ նախնեաց եկեղեցական ժողովների ժողովատեղը: Բոլորը յօժարութեամբ ժողովին եկան եւ օգտակար խորհրդակցութիւն ունեցան՝ աշխարհական կարգերը բարեկարգելու, հաւատի ընդհանուր կանոնները սահմանելու [այդ ժողովում] կարգ ու կանոն սահմանեցին, կազմակերպեցին եւ Հայոց աշխարհի բոլոր ժողովուրդը դարձրին իբրեւ վանականների մի ընդհանուր միաբանութիւն, բացի ամուսնութիւնից: Ներսէս եպիսկոպոսապետը ամենքի վրայ տարածում էր առաքելներից սահմանուած կանոնները... Նոյնը հրամայում էր կատարել բոլոր Հայոց աշխարհում, գաւառներում, կողմերում, անկիւններում)<sup>1</sup>:

Յետագայ բոլոր ժամանակներում Հայաստանեայց եկեղեցին իր դաւանաբանութեամբ ու կազմակերպական կառոյցով, ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, պահպանեց ս. Գրիգոր Լուսաւորչի հիմնած «Քրիստոնէական Հայաստանը», մեր ժողովրդին դարձրեց քրիստոնէութեան բարոյականութեան եւ համակեցութեան սկզբունքներով ԱԶԳՈՎԻՆ առաջնորդող առաջին ու միակ ազգն աշխարհում:

2. Ի տարբերութիւն միւս բոլոր ժողովուրդների հոգեւոր իշխանութիւնների, Հայաստանեայց եկեղեցու ղեկավարութեանը 301 թ. մինչեւ այսօր, քահանայից մինչեւ կաթողիկոս, պաշտօնի են կոչել ո՛չ թէ միայն

<sup>1</sup> Այսինքն՝ ամբողջ հայ ժողովուրդը վանականների նման սկսեց ասել՝ բացառութեամբ ամուսնութեան:

<sup>1</sup> Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1987 թ., էջ 118:

եկեղեցականները, այլև ժողովրդի բոլոր խաւերի՝ կողմից ազատ ընտրութիւններով ժողովրդավար մարմինները ձեւաւորուած ծխական, քաղական ու թեմական խորհուրդները ընտրել են քահանաներին ու թեմակալ առաջնորդներին, Ազգային-եկեղեցական ժողովները՝ կաթողիկոսներին: Քանի որ հայութեան բացարձակ մեծամասնութիւնը (90-95 տոկոս) եղել է մնում է Հայաստանեայց եկեղեցու հետեւորդ, ուստի Հայաստանեայց եկեղեցու դաւանութեան ու կազմակերպական կառոյցի շնորհիւ Հայաստանի տարածքում եւ բոլոր գաղթավայրերում հայոց եկեղեցին մնաց պետութեան մէջ պետութիւն, այսինքն՝ հայ ժողովրդի մտքի եւ հոգու մէջ պահպանեց ու մինչեւ մեր օրերը հասցրեց ս. Գրիգորի հիմնած «Քրիստոնէական Հայաստանը»:

3. Քրիստոնէութեան մուտքից յետոյ, յատկապէս կեդրոնացուած պետականութեան կորստի ամբողջ ընթացքում (1375-1918 թթ.), Հայաստանեայց եկեղեցին առաջնորդուել է ս. Գրիգոր Լուսաւորչի մշակած կանոններով, սկզբունքներով, նրա սահմանած դաւանութեամբ ու կազմակերպական կառոյցով: Ըստ այդմ՝ Հայաստանը բաժանուած էր վարչական ինքնավար հոգեւոր շրջանների՝ թեմերի, որոնց ղեկավար մարմինը հոգեւոր ու աշխարհիկ ընտրովի գործիչներից բաղկացած թեմական խորհուրդներն էին՝ այդ խորհուրդներին համարատու թեմակալ առաջնորդի գլխաւորութեամբ: Աւելի մանր վարչական տարածքները ղեկավարում էին տուեալ տարածքի ընտրովի խորհուրդները, որոնք ժՇ-ԺԹ դարերում կոչուեցին ծխական ու թաղական խորհուրդներ:

4. Հայաստանեայց եկեղեցին դաւանութեան եւ կանոնագրի հարցում եղել է մնում է խիստ կեդրոնաձիգ, իսկ կառավարման սկզբունքով՝ ապակեդրոն: Նկատի ունեն դաւանութեան ու ծեսի անձեռնմխելիութիւնը, իրենց իշխանութեան տիրոջներում թեմերի ունեցած շատ լայն ինքնավարութիւնը, ինչպէս նաեւ մէկից աւելի կաթողիկոսութիւնների եւ պատրիարքութիւնների առկայութիւնը, որը Հայոց եկեղեցու առանձնայատկութիւններից է:

5. Պատմական աղբիւրների վկայութիւնները քննելիս յստակօրէն երեւում է, որ մեր ազգային-եկեղեցական ժողովները իրենց բնոյթով, գործառոյթով ու նշանակութեամբ ըստ էութեան այսօրուայ խորհրդարանների դեր են կատարել: Տարբերութիւնն այն էր, որ այդ ժողովները գումարում էին ըստ պահանջեալ հարկին, երբեմն արտահերթ՝ պետութեան, ազգի ու եկեղեցու առջեւ ժառանգած կարեւորագոյն խնդիրները լուծելու, համազգային-համապետական նշանակութեան օրէնքներ ընդունելու, կաթողիկոսական ընտրութիւններ անցկացնելու եւ դաւանա-

\* Մինչեւ ժ դարավերջ, Հոռոմի պապերի ընտրութեանը եւս մասնակցում էին աշխարհականները, բայց՝ միայն բարձրաշխարհիկ դասը, ոչ երբէք ժողովրդի միւս խաւերը:

բանական հարցեր քննարկելու համար: Քրիստոնէութեան մուտքից առաջ Հայաստանում նման դեր կատարում էին տարին մէկ անգամ թագաւորների հրաւիրած աշխարհաժողովները: Ս. Ներսէս Մեծի հրաւիրած Աշտիշատի առաջին ժողովից (354) ու յատկապէս 428 թ. Արշակունեաց գահատոհմի բարձունից յետոյ աշխարհաժողովների տեղը բռնեցին ազգային-եկեղեցական ժողովները: Այսպիսով, 301 թ. սկսեալ, մեզանում աշխարհիկ ու հոգեւոր իշխանութիւնները ոչ թէ զատ-զատ են գործել, այլ սերտաճած են եղել իրար մէջ, կազմել մէկ ամբողջութիւն, ինչպէս հոգին ու մարմինը: Հետեւաբար երբ վկայակոչում ենք եկեղեցական գործիչների ու մարմինների ընտրութիւնների մասին պատմական տուեալներ, դրանք զուցէ թէ աւելի շատ վերաբերում են աշխարհիկ, քան հոգեւոր իշխանութեանը: Բերեն աշխարհաժողովների եւ ազգային-եկեղեցական ժողովների մի քանի վկայութիւններ:

Հայաստանեայց եկեղեցու առաջին հայրապետ ս. Գրիգոր Լուսաւորչի ընտրութեան մասին Դ դարի պատմիչ Ազաթանգեղոսը գրում է, որ ս. Տրդատ Մեծ թագաւորի հրամանով «եւ կուտեցան առհասարակ զօրքն ամենայն, եւ մեծամեծք եւ կուսակալք, գաւառակալք, պատուաւորք, պատուականք, զօրավարք, պետք եւ իշխանք, նախարարք եւ ազատք, դատաւորք եւ զօրագլուխք եւ հասեալ կային առաջի թագաւորին: Խորհուրդ ի մէջ ամուրյ թագաւորն ընդ ամենեսին, փութալ հասանել՝ բարեաց գործոց ժառանգաւոր լինել: «Եկայք, ասէ, ճպեսցուք զայս առաջնորդ կենաց մերոց տուեալ մեզ յԱստուծոյ զԳրիգորը հովիւ կացուցանել, զի լուսաւորեսցէ զմեզ մկրտութեամբ եւ նորոգեսցէ օրէնստւոյց խորհրդովն Արարչին մերոյ Աստուծոյ (...Ամբողջ զօրքը առհասարակ կուտակուեց, մեծամեծներ, կուսակալներ, գաւառապետներ, պատուաւորներ, զօրավարներ, պետեր, իշխաններ, նախարարներ, ազատներ, դատաւորներ եւ զօրագլուխներ հասան, ներկայացան թագաւորին: Թագաւորը ամենքի հետ խորհուրդ արեց որ փութան, հասնեն բարի գործերին ժառանգորդ դառնալու: «Եկեք, ասում է փութանք Աստծո կողմից տրուած մեր կեանքի առաջնորդին՝ Գրիգորին հովիւ դարձնել, որպէսզի մկրտութեամբ լուսաւորի եւ վերանորոգի մեր արարիչ Աստծո ամենուսոյց խորհրդով»<sup>1</sup>: Նոյն կերպ է եղել նաեւ ս. Ներսէս Մեծ (353-373 թթ.) հայրապետի ընտրութիւնը. «Ապա ի ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծք նահապետք ազգաց ազգաց, տոհմաց տոհմաց, գնդից եւ դրօշուց տեարք. ամենայն սատրապք նախարարք եւ ազատք, պետք եւ իշխանք, զօրավարք եւ սահմանապահք, ի մի հաւանութիւն միաբանական խորհուրդք, զի եկեսցեն տեսցեն եւ խորհեսցին վասն իւրեանց առաջնորդաց, թէ ո՛ւմ արժան իցէ նստել յաթռ հայրապետութեանն եւ հովուել բանաւոր խաշանց Քրիս-

<sup>1</sup> Ազաթանգեղոս, Պատմութիւն հայոց, 1983 թ., էջ 444:

տոսի... Ապա յականէ յանուանէ իսկ խնդրեցին աշխարհաժողով զօրքն բազմութեան զայն, որ անուանեալ կոչէր Ներսէս, զորդի Աբանագեանի, զթռն քահանայապետին Յուսկան, որդւոյ Վրթանայ, որդւոյն Գրիգորի մեծին՝ առաջնոյ քահանայապետին» (Արշակ բազաւորի մօտ ժողովի գումարուեցին նախարարական ցեղերի ու տոհմերի մեծամեծ նախարարներ, զնդերի ու դրօշակների տերերը, բոլոր սատրապները, նախարարներն ու ազնուականները, պետերը, իշխանները, զօրավարներն ու սահմանապահները: Ընդհանուր համաձայնութեամբ խորհուրդ արեցին, որ հաւաքուեն ու մտածեն թէ ո՞վ է արժանաւոր հայրապետական աթոռին նստելու եւ Քրիստոսի բանաւոր հօտը հովուելու... Ապա աշխարհաժողով բազմութիւնը յականէ-յանուանէ նշեց Ներսէսին<sup>1</sup>:

Հայոց Ե-ԺԸ դարերի մատենագրութեան, ազգային-եկեղեցական ժողովների արձանագրութիւնների եւ կանոնագրքերի մէջ յիշատակութիւններ կան, որ կաթողիկոսների ընտրութիւնների եւ դաւանական խնդիրներ լուծելու նպատակով գումարուած ազգային-եկեղեցական ժողովներին մասնակցել են նաեւ հասարակ շինականները եւ նոյնիսկ կանայք, ինչը անհեթեթութիւն կարող էր դիտուել այդ ժամանակների եւրոպական ամենաառաջադէմ երկրներում իսկ... Օրինակ, Ներսէս Բ կաթողիկոսի նախագահութեամբ կայացած Դուինի Բ ժողովը մերժեց Քաղկեդոնի ժողովի որոշումները, «եպիսկոպոսաց եւ իշխանաց, տանուտէրաց եւ համօրէն ժողովողականաց» ստորագրութեամբ միահանուռ հաստատեց «մի բնութիւն Բանին մարմնացելոյ» կիրեղեան բանաձեւը<sup>2</sup>: Աբրահամ Ա Աղբաթանեցի կաթողիկոսի (607-615) ընտրութեան մասին Ուխտանէս պատմիչը իր աշխատութեան Վասն միաբանութեան հայոց եւ կաթողիկոս ձեռնադրութեանն գլխում գրում է. «Իսկ իբրեւ եկին ժողովեցան առհասարակ ամենեքեան՝ եպիսկոպոսք եւ վանաց երիցունք եւ գեղջ Քահանայք եւ իշխանք եւ շինականք... ձեռնադրեն զԱբրահամ մեծաւ թախանձանօք եւ բազում աղաչանօք, թէպէտեւ ոչ կամաւ եւ յօժարութեամբ նորին՝ Կաթողիկոս» (Իսկ երբ եկան ժողովուեցին բոլորը՝ եպիսկոպոսները, վանքերի երեցներ, գիւղական քահանաներ, իշխաններ եւ շինականներ... իր կամքին ու ցանկութեանը հակառակ՝ ձեռնադրեցին կաթողիկոս»<sup>3</sup>: Իսկ 1441 թ. կաթողիկոսական ընտրութիւնների մասնակից թովմա Մեծօփեցու «Յիշատակարան»-ում կարդում ենք. «Եւ բազում վանօրայք եւ կրօնաւոր սուրբ հարք եւ պատուական երիցունք անելի քան գերեք հարիւր անձինս եւ բազում միայնակեացք, եւ ազատք եւ որդիք ազատաց ձեռ-

նաւորք եւ տանուտէրք. եւ անթիւ եւ անհամար բազմութիւն ժողովրդեան՝ արանց եւ կանանց... հաւանութեամբ ամենայն հայկազեան զաւառի... եղաք հայրապետ եւ կաթողիկոս առաքելական աթոռոյն Թադէոսի եւ Բարդուղիմէոսի եւ Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի զտր կիրակոս Վիրապեցու» (Եւ բազում այլ կրօնաւոր սուրբ հայրեր, պատուական երեցներ՝ անելի քան 300 հոգի, եւ բազմաթիւ ազատներ, ազատաց որդիներ, տանուտէրեր եւ ժողովրդի անթիւ ու անհամար բազմութիւն՝ տղամարդիկ եւ ԿԱՆԱՅԷ... բոլոր հայոց գաւառների հաւանութեամբ... Թադէոսի ու Բարդուղիմէոսի եւ մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչի առաքելական աթոռին կաթողիկոս դրեցին... տէր կիրակոս Վիրապեցուն): Բնակչութեան բոլոր խաւերի կողմից ազատօրէն ընտրուած մարմինների միջոցով իրագործուող ղեկավարման խորհրդարանական-սահմանադրական սկզբունքը առանց ընդհատումների տիրական է եղել յատկապէս պետականութեան բացակայութեան ընթացքում (1375-1918 թթ.), երբ Հայաստանեայց եկեղեցին ստիպուած ստանձնել է նաեւ հայութեան աշխարհիկ ղեկավարութիւնը: Մինչեւ քաղաքական կուսակցութիւնների ձեւաւորուելը (1885-1890 թթ), մեր եկեղեցին այդ առաքելութիւնը իրագործել է միայնակ, իր հովանաւորութեամբ գործող զանազան հաստատութիւնների ու կազմակերպութիւնների միջոցով (պարատներ, օղաներ, կտրիճւորաց եղբայրութիւններ, արհեստակցական միութիւններ եւ այլն): Հայաստանը նուաճած տէրութիւնների վերջնական նպատակը եղել է հայ ժողովրդի նաեւ հոգեւոր ինքնուրոյնութեան վերացումը, իսկ Հայոց եկեղեցու նպատակը՝ երկրի պետականութեան վերականգնումը: Հարիւրամեակների այս խուլ պայքարը զաւթիչներին թոյլ չի տուել կեդրոնանալու հայ ժողովրդի ինքնութեան գերագոյն պատուարի՝ նրա հոգեւոր անկախութեան վերացման վրայ, թէեւ նուաճողները, յատկապէս Բիւզանդիան եւ Ռուսաստանը, այդ ուղղութեամբ միշտ էլ վճռական քայլեր ձեռնարկել են: Այսպիսով, Հայաստանեայց եկեղեցին Հայաստանի անկախութեան բարձունից մինչեւ վերականգնումը անընկճելի յամառութեամբ ու հետեւողականութեամբ տուկացել է երկու ճակատով. պահպանել ժողովրդի հոգեւոր անկախութիւնը (առաջնորդուել ս. Գրիգորի հաստատած դաւանութեամբ ու վաղնջական ժամանակներից եկող հայոց սովորութային իրաւունքի վրայ հիմնուած օրէնքներով, պահպանել ու զարգացնել լեզուն, գրականութիւնն ու մշակոյթը, մի խօսքով՝ պահպանել «Հայաստանի քրիստոնէական հանրապետութիւնը»), վերականգնել պետականութիւնը: ԺՁ դարից սկսած՝ պետականութեան վերականգնման պայքարը եղել է զաղտնի, իսկ հոգեւոր անկախութիւնը պահպանելու գործողութիւնները՝ բացայայտ: Եկեղեցին անհամեմատ շատ անելի մեծ յաջողութիւն-

<sup>1</sup> Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն հայոց, Երեւան, 1987 թ., էջ 109, ընդգծումները՝ Ռ. Գ.):

<sup>2</sup> Արշակ Տէր-Միքելեան, Հայաստանեայց եկեղեցին եւ բիւզանդեանց ժողովոց պարագայք, Մոսկուայ, 1892 թ., էջ 89-ի տող. ծանօթ.:

<sup>3</sup> Ուխտանէս, Պատմութիւն բաժանման վրացի Հայոց, էջ 61-62:

<sup>1</sup> Թովմայ Մեծօփեցի, Յիշատակարան, Թիֆլիս, 1892 թ., էջ 52-54:

ներ է արձանագրել բացայայտ պայքարի ճակատում: Եւ որովհետեւ հայ ժողովրդի հոգեւոր անկախութեան հիմքը ժողովրդավարութիւնը, ազատութիւնն ու կազմակերպական ապակեղոնացումն է, ապա այս հանգամանքը բացառել է ժողովրդավարութեան եւ հոգեւոր ազատութիւնների մարզում նուաճողների եւ Հայ Եկեղեցու այնպիսի մի համագործակցութիւն, որը դոյզն-ինչ դիպչէր հայութեան հոգեւոր անկախութեանը: Ընդհակառակը, Հայաստանեայց Եկեղեցու եւ մեր երկիրը նուաճողների միջեւ միշտ էլ առկայ է եղել հակամարտութիւն: Ու երբ իշխող ցեղերը փորձել են դիպչել մեր հոգեւոր անկախութեանը, այդ հակամարտութիւնը վերաճել է քաղաքական բախման՝ ապստամբութեան: Տասնեակ օրինակներից յիշենք ամենապերճախօսները՝ Աւարայրը («Հայոց պատերազմ») ու 1903-1905 թթ. ապստամբութիւնը Ռուսաստանի դէմ, երբ Հայաստանեայց Եկեղեցին, հակառակորդի ունեցած ուժային բազմապատիկ գերակշռութեան պայմաններում իսկ, ժողովրդին 451-482-484 թթ. ոտքի հանեց Պարսկաստանի, 1905 թ. հազարապատիկ ուժեղ ռուսական կայսրութեան դէմ: Երկու դեպքում էլ յաղթանակը լիակատար էր: Հայը մնաց իր եկեղեցու եւ դպրութեան ծոցում, այսինքն, վերականգնեց իր անկախութիւնը: Մեր երկիրը նուաճած բռնապետութիւնների հետ մշտագոյ ահա այս հակամարտութիւնն էր, որ թոյլ չը տուեց հայ եկեղեցու ժողովրդավար էութիւնը տեղի տայ, եւ մեր ազգային ներքին կեանքում տիրապետի իշխողների բանեցրած կառավարման բռնապետական եղանակը: Նշուած հանգամանքի շնորհիւ կառավարման բռնապետական-վարչարարական եղանակը ոչ միայն մերժելի ու հակոտնեայ, այլեւ տրամաբանօրէն հակառակ է ազատութեանն ու ժողովրդավարութեանը միահիւսուած մեր ժողովրդի հոգեբանութեանն ու խառնուածքին, որը գալիս է Հայկ նահապետի ժամանակներից: Ահա եկեղեցու գոյութեան հիմքն ու խորհուրդ խորինը հանդիսացող այս հանգամանքներն են Հայ եկեղեցին դարձրել ժողովրդավարութեան, ազատութեան ու անկախութեան կղզեակը, պահպանն ու դրօշը Արեւելքում: Ընդ որում՝ պէտք է արձանագրել մի շատ կարեւոր հանգամանք. հայոց ազատագրական պատերազմները, Հայկ նահապետի մեծագործութիւնից սկսած, Աւարայրով վերջացրած, մեր ազգային դաւանանք-գաղափարաբանութիւնը պահպանելու հոգեւոր ազատամարտեր են եղել: Հայաստանեայց Եկեղեցու զխաւորու-

թեանք 451 թ. Աւարայրում իր դաւանանքի ազատութիւնը պահպանելու համար հայութեան վարած զանգուածային ազատամարտը ըստ էութեան դարձեալ մարդու եւ ազգերի իրաւունքների, խղճի ազատութեան, օրէնքի գերակայութեան եւ համամարդկային այլ արժէքների համար պայքար էր: Աւարայրի շարունակութիւնը հանդիսացող 481-484 թթ. ազատագրական պատերազմի յաղթանակից յետոյ Վահան Մամիկոնեանի ձեռքով Պարսկաստանին ներկայացրած հայերի երեք հիմնական պահանջները, որ այդ երկիրը ստիպուած եղաւ կատարելու, դրա փայլուն վկայութիւնն են. «Եւ է մինն յերիցմ՝ մախ եւ առաջին խնդիրս այս կարեւոր եւ պիտանի, եթէ զհայրենի եւ զբնիկ օրէնս մեր ի մեզ թողուք, եւ զՀայ այր զոք մի՝ մոգ ոչ առնէք... եւ քրիստոնեայ մարդկան եւ քահանայից զկարգ եւ զպաշտօնն քրիստոնէութեան համարձակութեամբ եւ աներկիւղ տայք պաշտել՝ ուր եւ կամին... Եւ երկրորդ խնդիրն այս է, թէ զմարդ ոչ ԻՇԽԱՆԱԲԱՐ ճանաչէք, այլ ԻՐԱՒԱԲԱՐ գիտել զլաւն եւ զվատթարն (այս երեքից մէկը մախ եւ առաջ այս կարեւոր եւ պիտանի խնդիրն է՝ որ մեր հայրենի եւ բնիկ օրէնքները մեզ թողէք, հայ ոչ մի մարդու մոգ չը դարձնէք... քրիստոնեայ մարդկանց եւ քրիստոնեաներին թոյլ տաք քրիստոնէական կարգն ու պաշտօնը համարձակ եւ աներկիւղ կատարել՝ ուր որ կամենան... Եւ երկրորդ խնդիրն այն է. որ մարդկանց ճանաչէք ոչ թէ իշխանաբար, այլ իրաւաբար իմանաք լաւն ու վատթարը)՝: Ասել է թե՛ հայ ազգը իր արեան գո՞ւ՛վ է նուաճում սեփական ժողովրդավար օրէնքներով ու դաւանութեամբ շարժուելու, այսինքն՝ խաւարի մէջ լոյս մնալու իրաւունքը, քանի որ ազատութիւնն ու ժողովրդավարութիւնը եղել են մեր առաջընթացը խթանող եւ ինքնութիւնը պահպանող գերագոյն պայ-

Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835 թ., հատոր Բ, էջ 148-149, 306; Վարդան Արեւելցի, Ներբողեան մեծիմաստ վարդապետին Վարդանայ երիցս երանեալ Պարթեւն Գրիգորիոս Լուսաւորիչ Հայաստան աշխարհս, զետեղուած է «Ներբողեանք ի սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» («Սոփերք») հատորեակում, Վենետիկ, 1853 թ., էջ 43-44): ԺԱ դարի վրաց պատմիչ Լեոնտի Մրովելին (Ռուխեցի), «Քարթլիս ցխովրեբա» ժողովածոյի մէջ նշում է. «...Հայոսը այդ եօթ հսկաներին ժողովեց եւ ասաց. «Օգնութեամբ արաբիչ չլինենք ոչ ոքի ծառայ, եւ ոչ ոքի չձառայենք, բացի Արարիչ Աստուծուց...» Եւ Հայոսը արձակեց նետը եւ զարկեց Ներբողի կրծքին, պղծեայ տախտակն անցնելով, դուրս եկաւ նրա թիկունքից» (Հայ ժողովրդի պատմութեան քրեստոմատիա, Երևան, 1981 թ., էջ 112-114): Սա կնշանակի հայերս ոչ միայն սկզբից ի վեր եղել ենք ճշմարիտ աստուածապաշտմիաստուած, այլեւ բազմաստուածութիւնը ձեւաւորուելու ժամանակ սկզբնաւորել ենք քաղաքակրթութեան հոգեմարտը կռապաշտութեան ու բազմաստուածութեան դէմ: Դա խղճի ազատութեան ու իրաւ Աստուածապաշտութեան համար մղուած առաջին ինքնապաշտպանութիւնն է մարդկութեան պատմութեան մէջ, որով մեր մեծագործ նախահայրը կանխում է տիեզերական եկեղեցու Աստուածաշնչեան սրբերին...

<sup>1</sup> Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1982, էջ 391:

<sup>2</sup> Յիսուս Քրիստոսի յայտնութիւնից 2492 տարի առաջ (հաշուարկել է Յովհաննէս սարկաւազ Իմաստասէրը (1045-1129 թթ.) մեր նախահայրը ոչ միայն դիմակազերծեց իրեն աստուած հռչակած բռնակալին, այլեւ նրա իսկ ենթակաների աչքի առաջ «սատակեց աստուածակարծեալ մսեղէն արձան»-ին (Սէրէոս): Այս մասին Վարդան Արեւելցին, վկայակոչելով հայ եւ օտար բազմալեզու աղբիւրներ, գրում է. «Հայկը այդ երկրի 71 նահապետների նման Բելի պատկերը չը պաշտեց, այլ նրանց պատկերապաշտ կենդանի առաջնորդին շուն կոչելով՝ սատակեց»: (Ղուկաս Ինճիճեան,

մանները: Հայաստանեայց եկեղեցին իր ապակեդրոն ու ժողովրդավար կառույցով 1700 տարի պահպանելով ու բիրեղացնելով մեր ժողովրդի հոգեբանութեան մէջ հայկազունեաց ժամանակներից շարունակ տրոփող ազատութեան, անկախութեան ու ժողովրդավարութեան բնական որակները, տենչն ու բաղձանքը՝ դրանք դարձրել է հայութեան արեան մէջ ամրագրուած հոգեբանական ու կազմախօսական անօտարելի էութիւն՝ երբեմն արձանագրելով որոշակի շեղումներ:

Ինքնակառավարման այս սկզբունքը մեր եկեղեցու գլխաւորութեամբ իրագործուել է նաեւ գաղթավայրերում (Լեհաստան, Հունգարիա, Ուկրաինա, Հնդկաստան, Ռուսաստան, Տրանսիլւանիա, Պարսկաստան, Վրաստան եւ այլուր): Հայ համայնքների իրաւական ժողովածոները՝ գաղթավայրերում գործադրելով եւ տեղի ժողովուրդների լեզուով դրանք թարգմանելով, որոշակի ազդեցութիւն են թողել հիւրընկալ երկրների կառավարման ու դատական համակարգերի վրայ:

Օրինակ, ԺԴ դարից Լեհաստանում գործածուող լեհահայոց դատաստանագիրքը, որտեղ յստակօրէն նշուած է կառավարող եւ դատական մարմինների՝ ամբողջ համայնքի կողմից ընտրուած լինելու փաստը, 1518 թ. թարգմանուել է լատիներէն (1528 թ. նաեւ լեհերէն), 1519 թ. հաստատուել Լեհաստանի Սէյմում: Կամ՝ ճորտատիրական ամենադասական երկրներից մէկը՝ Ռուսաստանը: 1765 թ. Եղիազար Գրիգորեանը, Գրիգոր դի Սաֆար Կամպանեանը եւ Օհանի որդի Սարգիսը կազմեցին «Աստրախանի Հայոց դատաստանագիրքը» (1135 յօդուած), որով առաջնորդուում էին Նոր Նախիջեւանի (այժմ՝ Դոնի Ռոստով), Աստրախանի, Մոզդուկի, Ղզլեարի, Ս. Խաչի (այժմ՝ Բուդիոնովսկ), Մոսկուայի եւ այլ վայրերի ռուսահայ համայնքները: Այդ դատաստանագրքով միապետական-ճորտատիրական Ռուսաստանում հայերը իրենց օրէնսդիր եւ դատական իշանութիւնը ձեւաւորում էին ազատ ընտրութիւններով ստեղծուած մարմիններով (քաղաքային վարչութիւնների եւ այդ վարչութիւններին հաշուետու քաղաքագլխի, մանր բնակավայրերում եւ գիւղերում՝ ծխական, թաղական ու թեմական ընտրովի խորհուրդների միջոցով): Ժողովրդավարութեան մի մակարդակ, որը Ռուսաստանի համար հասանելի դարձաւ միայն 20-րդ դ. վերջին տարիներին: Հայաստանեայց եկեղեցու կազմակերպական կառուցի ու օրէնսդրութեան հիմքի վրայ է կառուցուած նաեւ Յակոբ Շահամիրեանի «Որոգայթ փառաց» կոթողային երկը, որը աշխարհի առաջին սահմանադրութիւնն է՝ Արեւմտահայերը եւս, 1840-ական թուականներից սկսած, դարձեալ բռնապետական-միապետական մի երկրում իրենց օրէնսդիր, գործադիր ու դատական իշխանութիւնը սկսում են իրա-

<sup>1</sup> Ոսֆայել Համբարձումեան, Որոգայթ փառաց, ակունքները, այժմեականութիւնը եւ առանձնայատկութիւնները, Երեւան, 1999 թ:

կանացնել ժամանակի ամենաժողովրդավար սահմանադրութիւններին չը զիջող սկզբունքներով, իսկ 1857 թ. Նահապետ Ռուսինեանը, Աղաթոն եղբայրները, Սերովբէ Վիչենեանը, Նիկողոս Պալեանը, Գրիգոր Օտեանը եւ Կարապետ Ութիւնեանը կազմում են Հայաստանեայց եկեղեցու «Ազգային սահմանադրութիւնը»՝ ամբողջ Արեւելքի, նաեւ Ռուսական կայսրութեան սահմաններում իրագործուած առաջին սահմանադրութիւնը, որը երկար քննարկումներից յետոյ Հայոց ազգային ժողովը հաստատում է 1860 թ., սուլթանը՝ 1863 թուականին: Հայաստանեայց եկեղեցու այդ սահմանադրութեամբ արեւմտահայութիւնը ղեկավարում էր իր իսկ ընտրած եւ Կ. Պոլսում նստող 140 հոգիանոց «Ազգային ընդհանուր ժողովով»՝ խորհրդարանով: Ազգային ընդհանուր ժողովի նախագահն էր Թուրքիոյ հայոց պատրիարքը, որն օժտուած էր այսօրուայ նախագահի (պրեզիդենտ) լիազօրութիւններով, ունէր իր գրասենեակը (դիւանատուն), աշխատակազմը, իսկ Ազգային ընդհանուր ժողովի ընտրած գործադիր մարմինը (Կեդրոնական վարչութիւն) ըստ էութեան կառավարութիւն էր՝ իրեն հաշուետու ուսումնական, տնտեսական, դատաստանական ու ելեւմտից «Յանձնաժողովներով», ինչպէս նաեւ գաւառական եւ այլ վարչութիւններով ու հոգաբարձութիւններով: Բոլոր պաշտօնեաները, թաղական խորհրդի անդամներից սկսած պատրիարքով վերջացրած ընտրովի էին եւ խիստ հաշուետու՝ երեսփոխանների (պատգամաւորների) առաջ, դատարանն անկախ էր: Ի դէպ սուլթանի կողմից հայոց ժողովրդավարութեան վրայ գործադրվող ճնշումը թուլացնելու համար հայերը ամէն ջանք թափեցին, որպէսզի թուրքերը եւս ունենան սահմանադրութիւն: Գրիգոր Օտեանը Միդիաթ փաշայի հետ կազմեց նաեւ թուրքական սահմանադրութիւնը, որը սուլթանը 1876 թ. հաստատեց, իսկ 1878-ին չեղեալ յայտարարեց: Այս եւ բազմաթիւ այլ փաստեր ցոյց են տալիս, որ մեր իրաւական յուշարձանները ազդեցութիւն են թողել մեզ հետ շփում ունեցած երկրների իրաւական համակարգերի վրայ:

Բ. Ժամանակն է շեշտելու եւ հիմնաւորելու պատմական այն իրողութիւնը, որ Հայաստանեայց եկեղեցին տիեզերական եկեղեցու՝ առաջելական շրջանի ճշմարիտ դաւանութիւնը պահպանած ու մեր ժամանակները հասցրած միակ կառույցն է:

Աստուածաբանութեանը, մասնաւորաբար Հայաստանեայց եկեղեցու դաւանաբանութեան առանձնայատկութիւններին բաւարար ծանօթութիւն չունեցող որոշ գիտնականներ այսօր սկսել են յօդուածներ գրել, գիտաժողովներին զեկուցումներ կարդալ մեր եկեղեցու դաւանութեան վերաբերեալ՝ թէ՛ մեզ եւ թէ՛ յատկապէս օտարներին զցելով թիրիմացութեան մէջ: Առանձնապէս անընդունելի են երկու շատ բարդ եւ նուրբ խնդիրների մասին նրանց տարածած դրսեկ հաստատումները, որոնք դառնում են ապատեղեկատուութիւն: Մէկը՝ որ իբր մեր եկեղեցին

«արելեւեան» է, միւսը՝ որ իբր միաբնակ է (միաբնակը (մոնոֆիզիտ) այն եկեղեցին է, որը Յիսուս Քրիստոսին միայն Աստուած է ճանաչում, երկաբնակները Յիսուսի մէջ երկու բնութիւն են ընդունում՝ կատարեալ մարդ եւ կատարեալ Աստուած): Հայոց եկեղեցին, համեմատաբար աւելի մերձ լինելով միաբնակութեանը՝ այսուամենայնիւ ո՛չ միաբնակ է, ո՛չ երկաբնակ մի շարք պատճառներով: Նախ, որ ընդունում է քրիստոնէական եկեղեցու միայն առաջին երեք (իսկական) տիեզերածողովների (Նիկիոյ 325 թ., Կ. Պոլսոյ 381 եւ Եփեսոսի 431 թթ.) սահմանած դաւանութիւնը, երբ եկեղեցին ոչ արելեւեան, ոչ արեւմտեան էր, այլ մի՛ էր եւ ոչ միաբնակութիւն կար, ոչ երկաբնակութիւն: Այդ շրջանում նշուած տարբերութիւնները կային, բայց էական չէին: Ոմանք Քրիստոսի մարդկային բնութիւնը գրեթէ ջնջում էին (Եւտիքէսի միաբնակութեան նախահիմքը), իսկ Անտիոքի դպրոցը պնդում էր, թէ Քրիստոսի մարդկային եւ աստուածային էութիւն-բնութիւնների միջեւ որոշ անջատում կայ (Փլաբիանոսի երկաբնակութեան նախահիմքը): Սակայն Աղեքսանդրեան դպրոցի առաջարկած եւ առաջին երեք տիեզերածողովների հաստատած միջին դիրքը (Յիսուս Քրիստոսը Աստուած է, որի մէջ անշփոթելիօրէն միացած են երկու բնութիւնները՝ Աստուած եւ մարդ) հաւասարակշռում էր այդ երկու հերձուածները: Բայց երբ Հռոմէական կայսրութիւնը երկատուեց Արեւմտեանի եւ Արելեւեանի (395 թ.), ամբողջական-միասնական քրիստոնէական եկեղեցին քաղաքական նպատակներով սկսեց մասնատուել: Առաջին պառակտումը եղաւ Քաղկեդոնի ժողովում (451 թ.): Այդտեղ Հռոմի եւ Կ. Պոլսոյ Աթոռները, օգտագործելով հռոմէական կայսր Մարկիանոսի իշխանութիւնը, ընդունել տուեցին դաւանական նոր սկզբունքներ եւ փաստօրէն ջնջեցին առաջին երեք տիեզերածողովների դաւանական բանաձեւումներից մէկը, որի խտացումը Կիւրեղ Աղեքսանդրիացու յայտնի բանաձեւերն էին՝ «Մի բնութիւն բանին Աստուծոյ մարմնացելոյ» (մէկ է մարմնացած բանի {Քրիստոս Աստուծոյ} բնութիւնը) եւ «յերկուց բնութեանց եւ մի», որը ս. Յովնան Օձնեցին մեկնաբանում է այսպէս. «Երկուս ըստ բնութեան, եւ մի՛ ըստ միաւորութեան»՝ բնութեամբ երկուս, բայց միաւորութեամբ՝ մէկ: Անտիոքի դպրոցի վերոյիշեալ այն դրոյթը, թէ Քրիստոսի մարդկային եւ աստուածային բնութիւնների միջեւ անջատում կայ, Քաղկեդոնը աւելի՛ զարգացրեց: Այսպէս մէկը միւսին իր ազդեցութեան տակ օգել ձգտող Աթոռները միասնական եկեղեցու վարդապետութիւնը բեռնեցին նոր բանաձեւումներով, երկուստէ սկսեցին արագօրէն հեռանալ առաքելական շրջանի եւ յետագայ երեք դարերի ընթացքում եկեղեցու մեծ հայրերի բիրեղացրած դաւանութիւնից: Աւելի ճիշտ՝

<sup>1</sup> Արշակ Տր-Միքէլեան, Հայաստանեայց եկեղեցին եւ Բիւզանդիան ժողովոց պարագայք, Մոսկուայ, 1892 թ., էջ 89-ի տողատակի ծանօթագրութիւնը:

Քաղկեդոնից յետոյ առաջացած տարբերութիւնները հետզետէ սկսեցին զերազանցել ընդհանրութիւնների: Յետագայ դարերում տարբերութիւնները քաղաքական նկատառումներով աւելի խորացան ու այլեւս անհնար դարձաւ Քրիստոսի եկեղեցու միութիւնը: 2 դարասկզբից իրանից հեռացան նաեւ Հռոմի եւ Կ. Պոլսոյ Աթոռները, որոնք 451 թ. Քաղկեդոնում միացել էին Աղեքսանդրիայի Աթոռին ծնկի բերելու համար: Ընդ որում՝ Արելեւեան Հռոմէական կայսրութեան ազդեցութեան տակ ընկած յունադաւան եկեղեցին հետզետէ սրբագրելով Հռոմի առաջարկած դոգմաները՝ սկսեց ետ գալ դէպի Հայոց եկեղեցու պահպանած դաւանութիւնը: Սա այն դէպքում, երբ մի քանի դար շարունակ հայերիս ստիպում էր միանալ Քաղկեդոնում ընդունուած բանաձեւերին: Բիւզանդիան վրացիներին է դարասկզբին Կիւրիոն եպիսկոպոսի ձեռամբ անջատեց Հայոց եկեղեցուց, միացրեց իրեն, որով վրաց եկեղեցին ամբողջովին կորցրեց այն ազատութիւնն ու ինքնավարութիւնը, որ ուներ, երբ միացած էր Հայոց եկեղեցուն: Ը դարից սաստկացած Հռոմ-Կ. Պոլիս Աթոռների հակամարտութիւնը այնքան խորացաւ, որ 1054 թ. այդ Աթոռները վերջնականապէս բաժանուեցին: Հռոմէական (լատին) եկեղեցին սկսեց պաշտօնապէս կոչուել կաթոլիկ (ընդհանրական), Արելեւեան Հռոմէական կայսրութեան ազդեցութեան տակ ընկած եկեղեցին Կ. Պոլիս կեդրոնով, շարունակեց անուանուել Յոյն Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցի: Հռոմի Աթոռը կոչոււմ էր Արեւմտեան, Կ. Պոլսինը՝ Արելեւեան: Միաբնակ յունադաւանները նզովելի աղանդ համարեցին երկաբնակ հռոմէականներին, (լատինադաւաններ, կաթոլիկներ), հռոմէադաւանները՝ յունադաւաններին: Հայաստանեայց եկեղեցին չի մասնակցել այս բաժանումներին եւ Արելեւք-Արեւմուտք հակամարտութեան ամբողջ ընթացքում միշտ պահել է ինքնապաշտպանական չէզոք դիրք, մահու եւ կենաց պայքարով պահպանել իր գրիգորլուսաւորչա-հաստատ դաւանութիւնը, քանզի յոյները հայերին ձգտում էին քաշել իրենց կողմը, լատինները՝ իրենց: Այդ ընթացքում հայադաւանութիւնը հայոց եկեղեցու մեծ հայրերի ստեղծած դաւանաբանական, ծիսագիտական ու աստուածաբանական ահռելի գրականութեամբ, հայոց ինքնատիպ Պատարագամատոյցով, ժամերգութեամբ, հոգեւոր երաժշտութեամբ, քրիստոնէական գրականութեամբ ու արուեստով ամբողջացաւ՝ քրիստոնէական եկեղեցիների համակարգում՝ դառնալով մի ինքնուրոյն ու անշփոթելի ուղղութիւն: Միով բանիւ, Հայաստանեայց եկեղեցու դաւանաբանութիւնը, իր մէջ ներառելով մեր ազգային խառնուածքի, բնաւորութեան ու պատմական հոգեբանութեան ամենաբնորոշ տարրերը, լիովին հայացաւ: Աւելի կարճ՝ ինչպէս որ քրիստոնէական պարզ խաչը դարձրինք անկրկնելի եւ զուտ հայկական խաչքար, մօտաւորապէս նոյն կերպ էլ քրիստոնէութիւնը դարձրինք հայադաւանութիւն: Մեր ազգային դաւանութիւնը՝ ներառելով թէ՛ երկաբնակների եւ թէ՛ միաբնակնե-

րի դաւանութեան տարրերը, իր դաւանաբանութեան համալիրով գրեթէ հաւասարապէս առանձնացաւ թէ՛ մէկից եւ թէ՛ միւսից: Չեզոքութեան այս հանգամանքով Հայոց եկեղեցին ինքնաբերաբար դարձաւ երրորդ խոշոր ճիւղը քրիստոնէական հին եկեղեցիների մէջ: Ըստ Մաղաքիա արք. Օրմանեանի՝ Հայոց եկեղեցին միջնադարում 30 միլիոնի չափ հետեւորդ է ունեցել<sup>1</sup>, որոնց մէջ վրաց (մինչեւ է դարը), աղուանից, դպտի, եթովպական եկեղեցիները: Այս պատճառով է որ եթէ յոյներին, բուլղարներին, վրացիներին, ռուսներին եւ այլոց ասում են «յունադաւան», եւրոպական ազգերի մեծամասնութեանը՝ «լատինադաւան» կամ «կաթոլիկ», ապա հայերին օտարները անուանել եւ անուանում են «հայգրիգորեան», հայերս մեր դաւանութիւնը անուանում ենք հայադաւան: Եզրակացութիւնը հետեւեալ իրողութիւնն է. քանի որ Բիւզանդիան եւ Հռոմը քրիստոնէութիւնը փորձում էին դարձնել ապազգային գաղափարախօսութիւն՝ ուրիշ ազգերին իրենց տիրապետութեան տակ օգտելու համար, հայերս էլ, ինքնաբերաբար պահպանելով ճշմարիտ քրիստոնէութիւնը՝ այն դարձրինք մեր ինքնութիւնը, կրթա-մշակութային ու քաղաքական անկախութիւնը պահպանող ազգային գաղափարախօսութիւն: Այսպէս, հայոց քրիստոնէականը՝ հայադաւանութիւնը, դարձաւ արեւմտեան եւ արեւելեան քաղաքակրթութիւնների խաչմերուկներում հազարամեակներ շարունակ մարտնչող հայկական ինքնուրոյն ու անշփոթելի քաղաքակրթութեան խտարանը, համայն հայութեան հոգեւոր անկախութեան եւ միասնութեան վեճը, հայ ազգի հոգեւոր հայրենիքը:

Քանի որ Հայաստանեայց եկեղեցին պահպանել է քրիստոնէական նախնական շրջանի անաղարտ դաւանութիւնը եւ յետագայ դարերում երկու ճակատով մարտնչել է քրիստոնէութիւնը երկու ծայրայեղութիւններից հեռու պահելու համար, ուստի, անկասկած, իր դաւանութիւնը քրիստոնէական եկեղեցին վերամիաւորելու շաղախն է: Օրինակ բերենք թէկուզեւ Յիսուս Քրիստոսի բնութեան շուրջ քրիստոնէայ աշխարհը դարեր շարունակ փոթորկող վեճը: Այս վեճի մէջ մեր եկեղեցին միջին դիրք է որդեգրել. Յիսուսի մէջ Աստուածը եւ մարդը անգատելի, բայց միաժամանակ անխառնելի-անշփոթելի եւ «անճառելի» կերպով միացած են զիրար, ինչպէս հոգին ու մարմինը մարդու մէջ: Կամ՝ ոչ դաւանաբանական, բայց նոյն կարեւորութիւնն ունեցած մէկ այլ կնճիռ, յայտնի է, որ յոյները տիեզերական են համարում եօթ ժողով՝ Նիկիայի Ա (325 թ.) տիեզերաժողովից մինչեւ Նիկիոյ երկրորդը, ժողովը (787 թ.), իսկ Հռոմի կաթոլիկ եկեղեցին՝ այս եօթից շարունակում է տիեզերական կոչել եւս 13-մինչեւ 1870 թ. Վատիկանում գումարուածը, որոնք յոյն ուղղափառ եկեղեցին ու նրա հետեւորդ ազգերը տիեզերական չեն ճանաչում: Հայերս տիեզերական ենք ընդունում միայն առաջին երեքը, որը

ընդունելի է թէ՛ յոյն ուղղափառ եւ թէ՛ Հռոմի կաթոլիկ եկեղեցիների համար: Այս, նաեւ մի քանի այլ հանգամանքներով Հայաստանեայց եկեղեցու դաւանութիւնը քրիստոնէական եկեղեցու միաբանութեան խարխալը, հիմքն ու ենթահողն է: Մտայնութիւն, որն, ի դէպ, առկայ էր նաեւ վաղ միջնադարեան եկեղեցու ոչ թէ հայ, այլ օտարազգի մեծ հայրերի շրջանակներում: Նրանցից մէկը՝ Միքայէլ Մեծը, պատմում է, որ Պետրոս եպիսկոպոս Գագացին (Գագայեցի) հայերին ուղղած իր նամակում գրում է. «Ի Քաղկեդոն ուրացան զՔրիստոս. դուք պիճը կացեք ի հայրենի հաւատոյ՝ որ շնորհեցաւ ձեզ ի Տեառնէ եւ աշխարհէ ձեր. զի որպէս երբեմն սերմն մարդկութեան այդուստ (Հայաստանից: Ռ. Հ.) սփռեցաւ ընդ աշխարհի (նկատի ունի Նոյի էջը Արարատեան դաշտ- Ռ. Հ.), նոյնպէս առ ձեզ պահեցաւ սերմն ուղղափառ հաւատոյ. եւ ի ձե՛նք տարածելոց է ընդ բազումս»<sup>1</sup>: Կամ՝ 616 թ. Տիգրանում կայացած՝ Պարսկական կայսրութեան բոլոր քրիստոնէայ եկեղեցիների աստուածաբանների ժողովը, որին մասնակցում էին նաեւ Ալեքսանդրեայից գերուած իմաստասէրներ եւ Երուսաղէմի Չաքարիա պատրիարքը, քննելով բոլոր քրիստոնէայ ժողովուրդների դաւանութիւնը՝ ճշմարիտ է ճանաչում միայն հայոց դաւանանքը: Այդ ժողովի որոշման հիման վրայ պարսից թագաւոր Խոսրով Փարսէզը հրաման է արձակում. «Ամենայն քրիստոնէայք, որ ընդ իձով իշխանութեամբս են՝ հաւատ զՀայոցն կացցին» (իմ իշխանութեան տակ գտնուող բոլոր քրիստոնէաները հայոց հաւատն ընդունեն<sup>2</sup>): Այս հաստատումների պերճախօս վկայութիւններն են 1971 թ. Վիեննայում կայացած՝ Հռոմէական կաթոլիկ եկեղեցու եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիների, 1990 թ. յունադաւան օրթողոքս եկեղեցիների եւ Արեւելեան ոչ օրթողոքս եկեղեցիների խորհրդաժողովներում ընդունուած հաշտարար փաստաթղթերը<sup>3</sup>, որոնց ձեւակերպուած դաւանական սկզբունքները շատ մօտ են Հայաստանեայց եկեղեցու դարերով քարոզած վարդապետութեանը, մասնաւորապէս՝ լատիններին եւ յոյներին յղած Ս. Ներսէս Շնորհալու բանաձեւերին: Կասկած չունեն, որ եթէ աւելի քան 1575 տարուայ ընդմիջումից յետոյ որոշուի գումարել քրիստոնէական եկեղեցու չորրորդ տիեզերաժողովը, ապա այն անկասկած Ս. էջմիածնում պիտի գումարուի՝ միասնաբար վերականգնելու համար եկեղեցու վաղեմի միութիւնը: Ահա թէ ինչու՝ Հայաստանեայց եկեղեցու դաւանաբանութիւնը (դաւանութիւն, ժամերգութիւն, ծիսակատարութիւն եւ ազգային աստուածաբանութիւն), լինելով մի ինքնուրոյն ու անշփոթելի համակարգ քրիստոնէայ հին ժո-

<sup>1</sup> Մաղաքիա Օրմանեան, Հայոց եկեղեցին, Երեւան, 1993 թ., էջ 333:

<sup>1</sup> Արշակ Տեր-Միքէլեան, նոյն աշխատութիւնը, էջ 89-ի ծանօթագրութիւնը:  
<sup>2</sup> Սերբոս եպիսկոպոսի Պատմութիւն, Երեւան, 1939, էջ 125:  
<sup>3</sup> Կոմիւնիկէ, տե՛ս «Գանձասար» աստուածաբանական հանդէս, Երեւան, հատոր Ե, էջ 48-53:



դովորդների (հիմնական միաբնակ եւ երկաբնակ) դաւանութիւնների մէջ, միաժամանակ այդ դաւանութիւններն իրար ազուցող-քրիստոնէական նախնական շրջանի ճշմարիտ դաւանութեանը ՄԻԱԲՈՐՈՂ շաղախն է նաեւ: Դա այդպէս է, քանի որ պաշտօնական կրօն դարձած յունադաւանութիւնն ու կաթողիկոսութիւնը իրենց մէջ առկայ չնչին տարբերութիւնները դարերի ընթացքում շեշտելով-ուճացնելով՝ հաւասարապէս հեռացան երեք տիեզերաժողովների հաստատած ճշմարիտ դաւանութիւնից: Մինչդեռ յունա-հռոմէական դաւանութիւնների պարտադրման դէմ իր ինքնապաշտպանական 1500-ամեայ ոգորումներում Հայ եկեղեցին կատարել է ճիշտ հակառակը: Յունադաւանների եւ լատինադաւանների միջեւ առկայ դաւանական տարբերութիւնները մեր դաւանութեան մէջ հասցնելով նուազագոյնի՝ Հայաստանեայց եկեղեցին յոյներին եւ լատինացիներին մշտապէս յորդորել է ոչ թէ աւելացնել ու խորացնել տարբերութիւնները, այլ յանուն Ընդհանրական եկեղեցու միութեան, շեշտել ընդհանրութիւնները: Դրանով Հայ եկեղեցու անկախութեան պայքարը ինքնաբերաբար դարձել է Քրիստոսի եկեղեցու միասնութեան համար մի կատարելա վկայաբանութիւն՝ անընդհատ փակելով ոչ էական տարբերութիւնների՝ յաճախ արհեստական խորացումից առաջացած այն վիճի, որ առկայ էր այդ երկու ուղղութիւնների միջեւ: Ուստի Հայաստանեայց եկեղեցին անզուգադիր դեր խաղաց քրիստոնէական եկեղեցին դաւանական նորանոր դոգմաներից ազատելու, դրանով իսկ եկեղեցու միութիւնը վերականգնելու ուղղութեամբ՝ դեռեւս 451 թուականից սկզբնաւորելով 1910 թ. առաջացած այսօրուայ «էկումենիկ» անուանեալ շարժումը, որը համարուում է մեր դարի նուաճումներից: Իսկ ինչ վերաբերում է հայ եկեղեցին «Արեւելեան» եկեղեցիների մէջ մտցնելուն, ապա նախ հայերս երբէք մեր եկեղեցին արեւելեան դաւանանքի եկեղեցի չենք համարել: Մեզ արեւելեան են համարել օտարները, որոնց մի մասն ի դէպ «Արեւելեան» է համարել նաեւ Յոյն Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցին... Հայ եկեղեցին պաշտօնապէս կոչել եւ կոչում ենք «Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցի»: Երկրորդ՝ օտարները Հայոց եկեղեցին Արեւելեան են անուանել նկատի ունենալով աշխարհագրական դիրքը, բայց ոչ երբէք ինքնուրոյն ծիսակատարութեամբ, պատարագամատոյցով, ժամերգութեամբ, տօնացոյցով մէկ ամբողջութիւն կազմող դաւանաբանութեամբ: Երրորդ՝ Հայոց եկեղեցին նուիրապետական առումով արտօնելի չէ մուծել «արեւելեան» եկեղեցիների մէջ: Այդպէս է, քանի որ արեւելեան անուանող եկեղեցիները (ղպտի, եթովպական, աղուանից, յետագայում նաեւ ասորական) մեր եկեղեցու հետ միասին պահելով առաջին երեք տիեզերաժողովների ընդունած դաւանութիւնը՝ միւս բոլոր եկեղեցիների համեմատ հայոց դաւանութեան ամենամերձ եկեղեցիներն են եւ տարբեր ժամանակներում կամաւորապէս անցել են Հայոց եկեղեցու հովանու

տակ (նրանցից մի քանիսի՝ աղուանից, վրաց, ասորաց քահանայապետերին ձեռնադրել ու հաստատել են Ամենայն հայոց կաթողիկոսները): Բազմաթիւ փաստեր կան, որ Ձ դարից սկսած՝ Ասորաց եկեղեցին քանիցս դիմել է Հայաստանեայց եկեղեցու օգնութեանը՝ ընդդէմ հերձուածողների եւ միշտ էլ այդ օգնութիւնը ստացել է: Նշուած եւ այլ հանգամանքներից ելնելով՝ պիտի եզրակացնել, որ մեր եկեղեցին այլադաւանութեան դէմ պայքարի առաջնորդն է եղել Արեւելեան կոչող եկեղեցիների մէջ եւ նրանց բարոյական մեցուկն այդ խնդրում: Այս հանգամանքով այդ խմբի եկեղեցիները մտնում են Հայադաւան եկեղեցու հետեւորդների ընտանիքի մէջ, ինչպէս իսպանացիները, լեհերը եւ այլ ազգեր կազմում են Կաթողիկ եկեղեցու ընտանիքը, բուլղարները, վրացիները, ռուսները եւ այլ ազգեր՝ Յունադաւան (օրթոդոքս) ընտանիքը: Ուստի պատահական չէ, որ օսմանեան պետութիւնը վերոյիշեալ եկեղեցիները ժե դ. երկրորդ կեսից մինչեւ անցեալ դարակէսը պաշտօնապէս անուանել է «Հայոց պատրիարքներից կախում ունեցող արեւելեան ժողովուրդների խումբ»<sup>1</sup>: Հետեւաբար՝ ասորական, ղպտի, եթովպական, նաեւ քաղղէացիների եկեղեցիները, որոնց մէջ են օտարներին հետեւող անտեղեակները մուծում մեր եկեղեցին, կամաւորապէս Հայաստանեայց եկեղեցու հովանու տակ մտած, սակայն իրենց ինքնուրոյնութիւնն ու ազգային յատկանիշները առաւելագոյնս պահպանած եկեղեցիներ են:

Սրանք են բազմաթիւ փաստերից գլխաւորները, որոնք հիմք ընդունելով՝ շեշտում ենք այն աներկբայելի իրողութիւնը, որ թէւէ Հայաստանը գտնուում է Արեւելքում, բայց Հայաստանեայց եկեղեցին դաւանաբանական ու նուիրապետական առումով արտօնելի չէ «Արեւելեան» եկեղեցիների մէջ մուծելը: Հայաստանեայց եկեղեցին իր ճշմարիտ դաւանութեամբ, ծիսակարգով, դաւանաբանական 1700-ամեայ վիթխարի ժառանգութեամբ եւ կազմակերպական խիստ իւրայատուկ ու եզակի ժողովրդավար կառոյցով եղել եւ մնում է արեւելեան ու արեւմտեան եկեղեցիները միաւորող շաղախը:

<sup>1</sup> Արշակ Տէր-Միքէլեան, Գշ. աշխատութ., էջ 109:

<sup>2</sup> Մաղաքիա արք. Օրմանեան, Հայոց եկեղեցին, էջ 232:

**Rafael Hambartsumian, The Apostolic Saint Church of Armenia- stronghold of biblical democracy and orthodox belief of the apostolic period of Christ Church for 1700 years,-** It's unquestionably true that the dawn of the new human civilization was Christianity. It has been the core, support and apogee of social justice and democracy, of freedom, brotherhood and progress of the individual and nations. At the times of Saint Gregory the Illuminator and Saint Trdat the Great Armenia was the first country in the world where the power was exercised by the state according to the principles of Christian ethics and coexistence that were typical for the Christian communities in the Apostolic period of Christianity. Thus our nation became the first and only nation in the world that nationally followed the principles of Christian ethics and community. For 1700 years, due to its decentralized and democratic structure the Church of Armenia has maintained and crystallized the innate qualities of freedom, independence and democracy alive since the time of Haikazuns and made them the blood and tissue of Armenian psychology.

The belief of the Church of Armenia became totally armenized involving the most typical elements of our national character and historical psychology.

The Church of Armenia has maintained the purity of faith of the initial Christian period and during the following centuries it has fought in two fronts to keep away Christianity from two extremes. Therefore the Church of Armenia with its veritable belief and ritual, with its 1700-year-old enormous heritage and its unique and specific democratic organization structure has always been and still is a cementing factor.

